ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

" 11" 11 2021 թ.
ՈՐՈՇՈՒՄ N 123-Ա

ՄՈՎՍԵՍ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին" թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 14"06.2021թ. թիվ 144 եզրակացությունը, Արջուտ համայնքի ավագանու 12"10.2021թ. թիվ 51-Ա որոշումը, քանի որ կառույցները համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Մովսես Ղարագյոզյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արջուտ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0110-0001, ծածկագրով 0.051223 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության:
2. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի սեփականության իրավունքը, Մովսես Ղարագյոզյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0110-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության 0.051223 հա հողամասի և

ինքնակամ կառուցված արտաքին չափերով՝ 57,15 քմ բնակելի տան, 8,07 քմ ծածկարանի, 1,70 քմ սանհանքույցի, 14,94 քմ մառանի և 0,83 քմ պարիսպի նկատմամբ, համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3.Օրինականացնել Արջուտ համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Մովսես Ղարագյոզյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0110-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության 0.051223 հա հողամասում ինքնակամ կառուցված 57,15 քմ բնակելի տունը, 8,07 քմ ծածկարանը, 1,70 քմ սանհանքույցը, 14,94 քմ մառանը և 0,83 քմ պարիսպը:

3. Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում, Արջուտ համայնքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

Համայնքի ղեկավար Վ.Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

11.11.2021թ. թիվ 124-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի 06-019-0110-0001 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 36-րդ փողոց, թիվ 4 փոստային հասցե:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

11.11.2021թ. թիվ 125-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի 06-019-0070-0033 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 3-րդ փողոց, թիվ 9 փոստային հասցե:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

j

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

17.11.2021թ. թիվ 126-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի ղեկավարի 11,11,2021 թվականի թիվ 124-Ա որոշման մեջ <<թիվ 4 փոստային հասցե>> բառերը փոխարինել <<թիվ 14 փոստային հասցե>> բառերով:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

17.11.2021թ. թիվ 127-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, առաջնորդվելով Արջուտ համայնքի ավագանու 16.11.2021 թվականի թիվ 55-Ն որոշմամբ՝

Որոշում եմ՝

Հաստատել Արջուտ համայնքի 2021 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի բաշխումը՝ համաձայն թիվ 1 և2 հավելվածների:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ